ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"05" ապրիլի 2022թ. N. ՄՀ/13.1/7434-2022

«Երեք բռունցք» ՍՊ ընկերության տնօրեն Հ. Հարությունյանին
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 7շ., 2բն.
ՀՎՀՀ 01230857
Հեռ. 098-40-21-48

Հարգելի՛ պարոն Հարությունյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 09.02.2022 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով թունելների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացրել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.14 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով 23.02.2022թ-ին «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 7.14 կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը միակողմանի լուծում է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հայտնում ենք, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները:

4/5/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. Երիցյան

Կատարող՝
Գնումների համակարգման բաժին
Հեռ.010.511-329